Գ. ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԻ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Է. Ա. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Գարեգին Սրվանձտյանցն իր գործունեությունն սկսեց 1850-ական թթ. վերջին և 60-ական թթ. սկզբին։ Մի ժամանակաշրջան էր դա, երբ Հայաստանից դուրս Պոլսի և Իզմիրի գաղթօջախներում իբրև օտդիսներ գործում էին Ուսկյուտարի, Մեսրոպյան վարժարանները, սակայն բուն Արևմտյան Հայաստանը զուրկ էր դպրոցներից։ Խորապես գիտակցելով կանոնավոր դպրոցի անհրաժեշտությունը, Մկրտիչ Խրիմյանը 1857 թ. Պոլսից փոխադրվում է Արևմտյան Հայաստանի ամենից հայաշատ կենտրոններից մեկը՝ Վասպուրական և Վարագում հիմնադրում «Ժառանգավորաց» դպրոցը։ Գործի են դրվում բոլոր միջոցները ժողովրդի մեջ լուսավորություն տարածելու համար։ Այդ միջոցներից ամենից հզորը երկուսն էին՝ դպրոց և տպարան։ Վարագա վանքից Հայաստանով մեկ տարածվում է «Արծվի Վասպուրականի» հանդեսը։ Իսկ «Ժառանգավորաց» դպրոցում հավաքվում են Արևմտյան Հայաստանի տարբեր ծայրերից եկած ուսումնատենչ պատանիներ։ Գիշերօթիկ դպրոցը իր բնույթով նորություն էր այդ միջավայրում։ Դասավանդվող առարկաներից էին երկրաչափությունը, թվաբանությունը, ազգային պատմությունը։ Գիշերօթիկի սանները դաստիարակվում են իրենց ուսուցչի՝ Խրիմյան Հայրիկի գաղափարական մթնոլորտում, «Արծվի» հզոր շնչի տակ իրենք էլ դառնում մի-մի «արծվիկներ»։ «Ժառանգավորացի» առաջին շրջանավարտները ցրվեցին ողջ Հայաստանի գավառներով մեկ, եղան ուսուցիչ, բանաստեղծ, վարդապետ, հասարակական գործիչ, լրագրող, ժողովրդի ցավերին ցավակից, նրա վերքերը դարմանող։ Այս գործիչների մեջ իր ուրույն տեղն ունի Գարեգին Սրվանձտյանցը՝ հայ բանահյուսության մեծ երախտավորը։ Սրվանձտյանցի լուսավորական գործունեությունը կարելի է բաժանել երկու բնագավառների՝ հրապարակախոսական և մանկավարժական։ Եվ պետք է նշել, որ Սրվանձտյանց-լրագրողը չի նսեմանում Սրվանձտյանց-մանկավարժի առջև։ Գիտակցելով տպագիր խոսքի՝ ամենամսյա հանդեսի մեծ նշանակությունը ժողովրդի լուսավորության գործում, նա եռանդուն մասնակցություն է ցույց տալիս «Արծվի Վասպուրականի» հանդեսի աշխատանքներին և դառնում է նրա փոխխմբագիրը։ Սրվանձտյանցը կոչ էր անում հայ երիտասարդությանը ականջը խուլ չպահել ժամանակի արթնացնող զանգի առաջ, բարձրանալ գիտության աստիճաններով, «զի գիտություն զորություն է»։ Սակայն հանդեսից ավելի կարևոր և ժողովրդին ավելի մոտ կարող է լինել լրագիրը։ Եվ Սրվանձտյանցը 1863 թ. Տարոնում հրատարակում է «Արծվիկ Տարոնո» երկշաբաթաթերթը։ Ամեն ինչ արվում էր ժողովրդի համար. «Արծվիկը» էժան էր, դյուրամատչելի հայ շինականին, այն շարադրված էր շինականին հասկանալի պարզ ժողովրդական լեզվով. միաժամանակ փոքր էր նրա ծավալը, որպեսզի նոր կարդալ սովորողները չհոգնեն կարդալուց։ Խմբագիրը խոստանում էր նյութական փոքր-ինչ լավ վիճակի դեպքում թերթը հրատարակել ամիսը 3 անգամ, տասը օրը մեկ

(որ երբեք չիրականացավ)։ Ուսումը չպետք է լինի իշխող դասի մենաշնորհը, այն օդի և ջրի պես, հանապազօրյա հացի հետ միասին անհրաժեշտ է գյուղացուն, ժողովրդին։ «Գեղացի հայ. ինչո՞ւ ետս կքաշվիս կարդալե. մեր նախնի սուրբերը և իմաստունները շատը քո դեղեն ելած են. Խորենացին, Մեսրովբ և այլ թարգմանիչներ, որոնք այսօր կպաշտվին իրենց սրբությամբ և իմաստությամբ, մեկ մեկ գեղացու տղա են եղեր, բայց ազգի մը լուսավորիչ և վերանորոգիչ»[1],— գրում էր Սրվանձտյանցը։ Նա հորդորում է գյուղացիներին իր քարոզներով և հոդվածներով, ցույց տալիս ուսման օգուտը մարդկանց ամենօրյա կյանքում։ Ուսումնականը կարող է ավելի լավ մշակել հողը, շատ բերք ստանալ, պահպանել իր տքնության արդյունքները բարբարոսից, տերության անարդար հարկահավաքից, իսկ չկարդացող մարդը թեկուզ «շատ արտ ունենա և շատ ալ ցանե, բայց անոթի կմնա»։ Դրա համար էլ խմբագիրը բռնությունից և խեղճությունից ազատվելու դարմանը համարում է ուսումը։ Խորհրդածելով «լուսավոր գաղափարի», «հոգվոց և մտաց դաստիարակության» և «անձնական կամ մարմնական» պիտույքների մասին, Սրվանձտյանցը առաջնությունը տալիս է մարմնական պիտույքներին՝ «հաց պետք է և զգեստ»։ Եվ միայն դրանից հետո նա ընդգծում է լուսավորության մեծ նշանակությունը։ Ժողովրդի և մասնավորապես գյուղացու հետաքրքրությունը ուսման նկատմամբ հրահրելու համար Սրվանձտյանցը ամենից առաջ նշում է նրա գործնական նշանակությունը։ Խմբագիրը իր թերթի նպատակն էլ համարում էր ժողովրդի լայն խավերի մեջ ուսումը տարածելու, ժողովրդին լուսավորելու գործը։ «Քանզի դրա («Արծվիկի»—Է. Կ.) նպատակն է գյուղացվույն քան քաղաքացվույն խոսք հասկցնել, սիրտերնին կրթել, միտքերնին զարթուցանել ազգասիրական և քաղաքական սկզբունքներ լսելու, կարդալու և ուսանելու»[2]։ Ուրեմն ուսումը անհրաժեշտ է ժողովրդին ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքական նկատառումներով։ Նա բացում է ժողովրդի աչքերը, դրդում նրան ունենալ իր պահանջները, ոտքի է հանում նրան ազգակից և այլազգի տիրողների դեմ. «Զուզենք այն ռեսը, դու կառավարե երբեմն ալ, եթե կարող ես. չընդունենք այն իշխանը, մենք նորա տեղ նստինք ատյան դատաստան, միայն թե բավական լինինք տալ հակառակորդաց պատասխանը և պահպանել զազգ խաղաղ և առաջադեմ»[3]։ Ըստ Սրվանձտյանցի «կրթված և ուսյալ» ժողովուրդը չի հանդուրժի բռնակալություն. «դպրոցից ելած ժողովուրդը խաչատուրը կաթողիկոս չընդուներ»,— ասում է նա, ակնարկելով Աղթամարա խաչատուր կաթողիկոսի գործած հանցանքը կաթողիկոսական դահին հասնելու համար։

Ժողովրդին հասկանալի, պարզ ու մատչելի լեզվով Սրվանձտյանցը զրուցում է գյուղացիների հետ, բացում նրանց աչքերը, դրդում նրանց ուսումնասեր և ուսումնական դառնալ։ Ցավոք, «Արծվիկը» երկար կյանք չունեցավ։ Տարոնում բուն դրած ցեցերի և հոգևորականների քաղաքական մատնությամբ 1864 թ. թերթը փակվեց։ Կարճ ժամանակ հետո նորից սկսեց հրատարակվել, բայց 1865 թ. ընդմիշտ դադարեց։ Հետագա իր ողջ գործունեության ընթացքում Գարեգին Սրվանձտյանցը շատ սուր կերպով զգացել է պարբերականի կարիքը։

---

1 «Արծվիկ Տարոնոյ», 1863, № 12։
2 Նույն տեղում, № 1։
3 Նույն տեղում, № 3։

Խրիմյանի հետ միասին նրանք երկար մտորել են, ուղիներ որոնել այլ լրագիր հրատարակելու համար։ Բայց սուլթանական բռնակալական կարգերի անընդհատ խստացումները, երկրում տարածված «լրագրաց քոլերան» (Խրիմյանի արտահայտությունն է) թույլ չտվին նրանց իրականացնել իրենց ձգտումը։ Սակայն սեփական լրագրի բացակայությունը Սրվանձտյանցին չի զրկում գործելու հնարավորությունից։ Նրա առաջ հյուրընկալորեն բացում են իրենց դռները Սվաճյանի «Մեղուն» (որը միշտ արտատպում էր «Արծվիկ Տարոնոյում» լույս աշխարհ եկած Սրվանձտյանցի հոդվածները), Կ. Փանոսյանի «Մանզումեի էֆքիարը», Մամուրյանի «Արևելյան մամուլը», «Երկրագունտը», «Ժամանակը», «Մեղու Հայաստանին», «Փորձը» և այլ պարբերականներ։

Լրագրական-հրապարակախոսական աշխատանքներին զուգընթաց, դրանցից էլ առաջ, «Ժառանգավորացն» ավարտելուց անմիջապես հետո, Սրվանձտյանցը մնում է նույն դպրոցում իբրև ուսուցիչ։ Հետագայում՝ 1862 թ., երբ Խրիմյանը նշանակվում է Տարոնի առաջնորդ և Ս. Կարապետ վանքում հիմնում մի այլ «Ժառանգավորաց», այդտեղ նախկին աշակերտը հանդես է գալիս իբրև տնօրեն ուսուցիչ։ Սրվանձտյանցի լուսավորական գործունեության ամենափայլուն մասը նրա՝ արևմտահայ դպրոցի զարգացման ուղղությամբ կատարած աշխատանքն է։ Դպրոցը երիտասարդ սերնդի միտքն ու հոգին վերափոխողն է, այդ պատճառով էլ «մեր ազգին համար այսօր և ամեն ժամանակ առաջին գործը դպրոց պետք է ունենալ. դպրոցները արդյունավորել գիտնալ»[4]։

Մեծ էր դպրոցի դերն ու նշանակությունը առանձնապես այն պատճառով, որ պետականությունից զուրկ հայ ժողովրդի միասնությունը հենված էր հոգևոր և բարոյական գործոնների վրա։ Ըստ Սրվանձտյանցի, դպրոցական խնդիրը հարցերի հարցն էր և վեր ամեն ինչից. «Ո՛չ բարբարոս քրգերու ելուզակությունը, ո՛չ վանքերու կամ եկեղեցյաց կողոպտվիլը, ո՛չ այս և այն անհատ հայու սպանվիլը... ո՛չ Պոլսո թափուր մնացած պատրիարքարանը այնչափ իմ կարեկցությունս չեն կրնար գրավել, ասոնք գրեթե աննշան դեպքեր են դպրոցական խնդրույն առջև»[5]։ Կյանքի առաջընթացը, գիտության զարգացումը, արվեստների ծաղկումը, բոլոր «գպրոցներու ծնունդ և արգասիք են»։ Եվ քանի որ մանավանդ մեր ազգի համար դպրոցն ունի այդքան մեծ նշանակություն, ուրեմն ազգի ողջ ուշադրությունը, բոլոր հանգանակությունները պետք է կատարվեն հօգուտ դպրոցի։ Արդեն վարդապետ օծված Սրվանձտյանցը իր կարծիքների մեջ հասնում է այն աստիճանին, որ ժողովրդին քարոզում է վանքերի նվիրատվությունների փոխարեն ամեն ինչ տալ դպրոցներին. իսկ դպրոցները, ըստ նրա, պետք է լինեն ոչ թե վանքերի մեջ, կտրված ժողովրդից, այլ պետք է հիմնադրվեն ժողովրդի մեջ, ժողովրդի համար։ Սակայն Սրվանձտյանցը չի սահմանափակվել միայն քարոզներով։ Նա ամենօրյա գործոն մասնակցություն է ցույց տվել Արևմտյան Հայաստանի հայաշատ կենտրոններում՝ Տարոնում և Վասպուրականում, շրջակա գյուղերում դպրոցներ հիմնադրելուն և ուսուցչական կազմով ապահովելուն։ Առանձնապես մեծ աշխատանք է կատարում նա 1860-ական թթ. վերջին և 1870-ական թթ. սկզբներին Տարոնում։ Նրա անմիջական օգնությամբ դպրոցներ են հիմնադրվում Մշո դաշտի Մկրա-

---

4 ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարան, Սրվանձտյանցի ֆ., բ. II, գ. 65։

5 Նույն տեղում։

գոմ, Արտոնք, Վարդենիս, Դրվընիկ, Ավրան, Գոմս, Առնչվանք, Խեյպեան, Բերդակ, Ներքին Պուլանըխի Լիզ, Ատկան, Խոշկելտի, Բոստաքանդ, Վերին Պուլանըխի Համզաշեխ, Կոփ, Բաքառլու, Մաճիթլու, Շիրվանշեխ, Միրիպար, Մանազկերտի Վարդոի գյուղերում և այդ տերիտորիայում ընկած Ս. Հովհաննու, Առաքելոց, Ս. Դանիելի, Ս. Կարապետի վանքերում։

«Ամեն գեղերն ալ մի առ մի շրջեցա և լավ մ'ալ տքնեցա և չարչարվեցա։ ... Առջի օրը Մեղտուա դպրոցին այցելության գնացի, գիրք տարա և անցա Գոմսը. նույնպես անոնց ալ վարժարանին գրքեր տվի։ Ավրանա վարժարանը սկսել տվինք, Ճապաղջուրա Մատրակ գեղը վարժապետ մը ղրկեցինք»,[6]— գրում է Սրվանձտյանցը Խրիմյանին, շարունակելով մանրամասն թվարկել, թե որ գյուղում ինչ է արել։

Ժամանակակիցների հիշողության մեջ խոր հետքեր է թողել այն աշխատանքը, որ կատարել է Սրվանձտյանցը Կարինում։ 1867—1869 թթ. ընկած ժամանակամիջոցում, որոշ ընդհատումներով, նա եղել է Կարինի վարժարանի տեսուչը։ Նա շատ փոփոխություններ է մտցրել դպրոցական ծրագրերի և դասավանդվող առարկաների մեջ։ Դպրոցում դասավանդվել են ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա, նաև հողագործություն, լեզուներ, ազգային պատմություն, կրոն։ Ամենից նշանակալիցը եղել է մեծահասակների համար բացված կիրակնօրյա դպրոցը։ Տարեց մարդիկ ոգևորությամբ ամեն կիրակի հաճախում էին դպրոց, ուր Սրվանձտյանցի ազգային պատմության դասերը վեր էին ածվում հայրենասիրական ոգեշունչ ներբողների։ Կարճ ժամանակամիջոցում Կարինում շատ բան է արվում ժողովրդի ազգային ինքնագիտակցության արթնացման համար։ Լուսավորության գործը Սրվանձտյանցի մոտ ձեռք է բերում քաղաքական հընչեղություն և նպատակասլացություն։ Կարինի նրա աշակերտներ Հակոբ և Կարապետ Նշկյանները, Պալլարյանները հետագայում դառնում են ազգային-ազատագրական շարժման առաջամարտիկներ և հաճախ են ակնածանքով արտահայտվում Սրվանձտյանցի մասին։ Կարինցիների աչքում Սրվանձտյանցը այնպիսի հեղինակություն է ձեռք բերում, որ հետագայում, ռուս-թուրքական պատերազմից հետո, Կարինի հայության մեծ տեղաշարժը՝ գաղթականությունը կանխելու նպատակով Ն. Վարժապետյանը այնտեղ է ուղարկում Սրվանձտյանցին։ Այդ ժամանակաշրջանին է վերաբերում Սրվանձտյանցի «Ճառ ազգային լուսավորության և դաստիարակության վրա»-ն[7], որ նա կարդացել է Կարինում ուսումնական տարվա փակվելու կապակցությամբ։ «Ճառի» մեջ արտահայտված են նրա հայացքները լուսավորության, դպրոցի, ծնողների ունեցած դաստիարակիչ դերի մասին։ Նա շեշտում է, որ դաստիարակության մեջ կարևոր տեղ է գրավում երեխաներին ծնողների և ուսուցիչների անձնական օրինակով կրթելու հանգամանքը։ «Ծնողք են ավելի տղայոց համար վարժապետ, վասնզի ծնողաց հանցանք և վարմանց օրինակ շատ զգալի դաս է տղայոց...։ Ես դաստիարակություն ըսելով կհասկնամ տղայոց բարոյական կրթությունը, զոր ծնողք և վարժապետները պետք է շատ փափուկ խնամքով ի գործ դնեն տղայոց համար»։

Մեծ են Սրվանձտյանցի ջանքերը նաև Վանի դպրոցաշինության բնագավառում։ 1871 թ. վերջերին նա նշանակվում է Վանի Սահմանադրության գոր-

6 ԴԱԹ, Սրվանձտյանցի ֆ., բ. II, գ. 45։
7 Նույն տեղում, գ. 65։

ծաղրիչ և մեծ աշխատանք է կատարում Վասպուրականում նորանոր դպրոցներ բացելու, եղածները ուսուցիչներով ապահովելու ասպարեզում։ Առանձնապես նշանակալի է նրա կատարած աշխատանքը Վանի իդական վարժարանը բացելու ուղղությամբ։ Մինչև 1870-ական թթ. Վանը չուներ իդական վարժարան։ 1870 թ. Սրվանձտյանցի նախաձեռնությամբ Պոլսում վանեցի գաղթականներից կազմվում է Սանդխտյան ընկերությունը, որի միջոցներով էլ Վանում բացվում է Սանդխտյան վարժարանը[8]։ Մինչև իր կյանքի վերջը Սրվանձտյանցը մեծ խնամք ու հոգածություն է տածում դպրոցի նկատմամբ։ Առանձնապես ծանր էր դպրոցի վիճակը 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո։ Պատերազմի, հրի ու սովի ճարակ դարձած Վանը ապրում էր ճգնաժամային օրեր։ Սրվանձտյանցը, որ պատրիարք Ն. Վարժապետյանի կոնդակով շրջում էր Արևմտյան Հայաստանի հայաշատ կենտրոնները, միշտ էլ ժամանակ է գտնում վարժարանի պետքերը հոգալու համար։ Վանի այդ օրերի պատրիարքական տեղապահ Երեմիա Տեկանցի վկայությամբ Սրվանձտյանցը նյութական միջոցներ հայթայթեց դպրոցի համար, փոխեց դպրոցի հոգաբարձուների և ուսուցչական կազմերը և դպրոցի աշխատանքներն ընկան հունի մեջ[9]։

Հայաստանում կրթություն և լուսավորություն տարածելու նպատակով Պոլսում կազմակերպվել էին Արարատյան, Դպրոցասիրաց-Արևելյան և Խիզանի ուսումնասիրաց ընկերությունները։ Նուպար-Շահնազարյան վարժարանի նախկին շրջանավարտների և Ռ. Սրվանձտյանցի նախաձեռնությամբ 1878 թ. փետրվարի 18-ի ժողովում ստեղծվում է նաև Կիլիկյան ընկերությունը[10]։ Վերը հիշած փաստերի թվարկումը բավական է ցույց տալու Սրվանձտյանցի եռանդուն գործունեությունը լուսավորության բնագավառում։ Սակայն պատկերը թերի կլիներ, եթե չներկայացվեր այն ամենը, ինչ նա արել է 1877—1878 թթ. իր ուղևորությունների ընթացքում։

Ռուս-թուրքական պատերազմի ավարտից անմիջապես հետո Սրվանձտյանցը ոտքով շրջում է համարյա ողջ Արևմտյան Հայաստանը՝ հայ բնակչության ճշգրիտ թիվը պատրիարքարանին հանձնելու առաքելությամբ։ Դրա հետ մեկտեղ նա կատարում է ուրիշ բազմաթիվ ազգօգուտ գործեր։ Նա տեղագրում է Հայաստանի վանքերը և, խորապես գիտակցելով այդ վանքերում եղած ձեռագրերի մեծ նշանակությունը հայ ժողովրդի պատմության համար, Սրվանձտյանցը մեկ առ մեկ ցուցակագրում է դրանք, արտագրում դրանցից կարևոր հատվածներ և լույս ընծայում «Թորոս աղբար» երկհատոր աշխատության մեջ։ Միաժամանակ հայաշատ վայրերում նա այցելում է հայկական դպրոցները, օգնում ուսուցիչներին, հաճախ վերաբացում ինչ-ինչ պատճառներով փակված վարժարանները, խրախուսում ունակ ուսուցիչներին, դատապարտում անճարներին։ Այդ բոլոր դիտողությունները նա թղթին է հանձնում «Թորոս աղբար» աշխատության մեջ և պատրիարքարանին ուղղած իր տեղեկագիր-նամակներում։ Չնայած դրանք արվել են որոշակի առիթներով, սակայն ունեն այնպիսի ընդհանրացումներ, որոնցով կարելի է որոշել Սրվանձտյանց-լուսավորչի հայացքները։ Դպրոցը, ըստ Սրվանձտյանցի, «ազգային հույսն»

8 Հ. Երամյան, Հուշարձան, հատ. Ա., Ալեքսանդրիա, 1929, էջ 79։
9 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 4182, էջ 221—222։
10 Ա. Ալպոյաճյան, Մինաս Չերազ, Կահիրե, 1927, էջ 83—84։

է, որը, սակայն, գտնվում է անհույս վիճակում։ Այնտեղ տիրում է ուսման տեր-թողիկյան դաժան մեթոդը, համարյա բոլոր դպրոցներում իշխում են ծեծը, ֆալախան, «գալարուն վարոցը», դպրոցները գտնվում են անկանոն շենքերում, «ապականյալ օդերու մէջ», խոնավ հողի վրա, առանց պատուհանի և բնական լույսի։ Չկան գրասեղաններ ու նստարաններ, դասավանդումը կատարվում էր առանց ծրագրի, բացակայում է միասնական ընթերցարանը, իսկ վարժապետները՝ «անգետ իրենց պաշտոնին և անկիրթ»։ Ահա Ամասիա քաղաքի իդեալ վարժարանը. «Վարժապետը մի այլանդակ դեմքով, խառնած մազերով, բորիկ, պատժափայտն ի ձեռին, սպիտակ մազերով մեկը կերևար։ Քահանա է ըսին և աղջկանց վարժապետ, որ ոչ քահանա և ոչ մարդ կնմաներ»[11]։ Տգետ և գինով քահանան իր առտնին ապրուստը հայթայթելու համար դառնում է վարժապետ։ Սրվանձտյանցը դատապարտում է հայ ծնողներին, որոնք իրենց «ցավոք ծնած և տառապանոք մեծացած որդիքը» վստահում են նման դաստիարակների։ Այդ նույն գրությունն է տիրում Սեբաստում, Մելիտինեում։ Արևմտյան Հայաստանի այդ համատարած խավարի թագավորության մեջ Սրվանձտյանցը տեսնում է տեղ-տեղ փայլող փոքրիկ աստղեր՝ Սեբաստի «Թարգմանչաց ուսումնարանը», Թոքաթի «Վարդանանց» վարժարանը, իրենց շնորհալի ուսուցիչներով՝ Թադեոս պատվելի Կյուրեղյան, Հակոբ Մեսիայան, Մկրտիչ Փորթուգալյան։

Անմոռանալի են Սրվանձտյանցի՝ Խարբերդի Ս. Նշանի վարժարանի, Բալուի, Մարզվանի, Արաբկիրի դպրոցների նկարագրությունները, այնպես, ինչպես Պոռշյանի Աշտարակի դպրոցի և Բաֆֆու՝ Տեր-Թողիկի դպրոցի նկարագրությունները։ Հայ վարժապետի կերպարն էր կենդանանում հայրենասեր գործչի դրչի տակ. «Ոտքը բորիկ, փայտ ի ձեռին, ֆալախանը մեջտեղ...»[12]։

Սրվանձտյանցը ուշադրություն առանձնապես սևեռում է «աղջկաց» վարժարանների վրա։ Այսօրվա աղջիկը վաղվա մայրն է։ Մեծ է կնոջ դերը ընտանիքում, նա է երեխաների հիմնական դաստիարակը։ Ընտանիքի տղամարդը մեծ մասամբ հեռու է երեխաներից։ Փաստորեն հայ ժողովրդի ողջ ապագան, ազգության հույսը՝ մանուկ սերունդը, անխզելիորեն կապված է հայ կնոջ հետ։ Այդ պատճառով էլ ամենից առաջ պետք է լուսավորել նրան։ Հայ ժողովրդի գոյատևման ողջ ընթացքում հայ կինը տղամարդու հետ հավասար պայքարել է ժողովրդի ապագության համար։ Միշտ պետք է վառ պահել V դարի հերոսական կանանց հիշատակը։ Սրվանձտյանցը քարոզում է հայ մայրերին՝ նմանվել Մամիկոնյան Վահանի մորը՝ Զվիկին, որի շնորհիվ որդին դարձավ հայրենիքի վահան և ասպար։ Հայրենիքի սիրով վառված վարժապետը հայ կանանց հիշեցնում է Գրիգորյան մայրերին, որոնք դավակների կրթության և դպրոցներ կառուցելու համար նվիրաբերում էին իրենց զարդերը։

Հայրենասեր վարդապետը դիտողություններ է անում ընդհանրապես դպրոցները բարվոքելու, ուսուցման նոր ծրագրեր մտցնելու համար։ Այդ դիտողությունները վերաբերում են ոչ միայն դավառի, այլ նաև Պոլսի դպրոցներին։ «Ներկա վարժարանները բարեկարգելու մեծ պետք ունին, որոնցմով օգտակար աշակերտներ կրնան ընծայել ազգին, մանավանդ աղջկանց դաս-

11 Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, հատ. I, Կ. Պոլիս, 1879, էջ 52—53։
12 Նույն տեղում, էջ 20—21։

տիարակության վրա ուշ դարձնելով, հոգ պետք է տանել ընտիր ուսուցիչներ և լավագույն մեթոդներ հաստատել, որոնց պակասությամբ է միայն, որ մեր վարժարանները անպտուղ կմնան թե՛ գավառներ, և թե՛ Պոլիս»[13]։ Ինքը՝ Սրբվանձտյանցը եղել է ժամանակի հայտնի ուսուցիչներից մեկը։ Պոլսի ազգային վարժարանները հաճախ էին հրավեր ուղարկում նրան՝ ուսուցչության համար։ Արփիարյանի արտահայտությամբ՝ «փնտրված» ուսուցիչ էր նա։ Սակայն Սրվանձտյանցը միշտ հրաժարվում էր համեմատաբար հեշտ և հանգիստ պոլսական կյանքից։ Նրան ձգում էին հայ գավառները, բուն արևմտահայությունը։ Նրա ուսուցչական կարողությունների մասին են վկայում Խ. Մալումյանը[14] և Հրաչյա Աճառյանը[15]։

Սրվանձտյանցը չէր բավարարվում սոսկ դիտողություններով։ Արտահայտելով իր կարծիքը դպրոցական դասագրքերի մասին, Սրվանձտյանցը 1866 թ. ձեռնամուխ է լինում դասագրքի հրատարակության։ Լույս է տեսնում երկու մասից բաղկացած նրա «Նոր ընթերցարանը», որը «շատ տեղերև լավ ընդունելություն գտավ և շնորհակալության գրիր ալ ստացա ուսուցիչներեն»։ Ընթերցարանի լավ ընդունելության մասին է վկայում այն փաստը, որ այն ունենում է երեք հրատարակություն և բոլորն էլ արագորեն սպառվում են։ Արևմտյան Հայաստանի մանկավարժների կողմից այդ ընթերցարանը մեծ գնահատության է արժանանում։ Այդ պատճառով էլ 1870 թ. Խրիմյանը նոր պատվերներ է տալիս իր «արժանընտիր» աշակերտին. «Քանի մը դասագիրք պատրաստել պետք է և այն կուզեմ ձեր ձեռքով լինի և ձեր գրչով»[16]։

Խրիմյանի և Սրվանձտյանցի նամակագրությունից իմանում ենք, որ վերջինս զբաղվել է նաև «Հայոց պատմության» դասագիրք շարադրելով։ Հայ ժողովրդի պատմություն գրելը, մանուկ սերնդին մեր ժողովրդի բազմադարյան գոյապայքարին ծանոթացնելը եղել է ժամանակի հրամայական պահանջը։ Դրա համար էլ Խրիմյանը Սրվանձտյանցից պահանջում էր մանրամասն հաշվետվություն տալ իրեն պատմության դասագրքի շարադրանքի և վիճակի մասին։ Ըստ երևույթին լուսավորիչ վարդապետը ի վիճակի չեղավ վերջացնելու և տպագրության հանձնելու դասագիրքը, որովհետև այլևս այդ մասին փաստաթղթերում տեղեկություն չենք գտնում։ Ժամանակի և հանգամանքների բերումով Սրվանձտյանցն իր ունակություններն ու կարողությունները զործադրեց այլ ուղղությամբ և միայն ազատ ժամանակը տրամադրեց դասագրքերին ու գրականությանը։

Գրականությանը Սրվանձտյանցը մոտեցել է պատասխանատվության մեծ զգացումով, քաջ գիտակցելով ժամանակաշրջանի պահանջներն ու առաջադրած խնդիրները։ Ըստ նրա գրականությունը պետք է ճառագայթի նման լուսավորի մարդկանց մտքերը, մեծ դեր կատարի հայապահպանության համար մղվող պայքարում։

Գրական զործը, «Մասյաց սրինգներ հնչեցնելը» Սրվանձտյանցի համար ունեցել են որոշակի քաղաքական նպատակասլացություն. նա կոչ է անում արթնել «Մասյաց սրինգների» վրայից հնության փոշին և հնչեցնել արդիական մեղեդիներ, որպեսզի ժողովուրդը ծանոթանա իր անցյալին իմանա, թե որտե-

[13] Նույն տեղում, էջ 280։
[14] «Մշակ», 1892, № 145—146 («Դ. Սրվանձտյանը էրզրումում»)։
[15] Հ. Աճառյան, Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 100։
[16] ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., բ. II, գ. 436։

ղից է եկել և ուր է գնում, ներշնչվի մեր նահապետ Հայկի օրինակով՝ պայքարելու բոլոր ժամանակների բելերի դեմ՝ հանուն ազատության։ Սրվանձտյանցի գրական երախայրիք «Անկումն Արշակունյաց հարստության» և «Շուշան Շավարշանա» պիեսները՝ փոխադրելով իր ժամանակակիցներին մեր ժողովրդի պատմության համար բախտորոշ նշանակություն ունեցող անցյալը, IV և V դարերի օրինակով ոգևորում են հայերին պայքարի նետվել՝ հաղթելու վճռականությամբ։ Պեշիկթաշլյանի, Դուրյանի պատմական պիեսների հետ Սրվանձտյանցի վերոհիշյալ գրվածքները ևս մեծ ազդեցություն են գործել և հաջողությամբ բեմադրվել Վարագում, Տարոնում։ Ժողովուրդը ի դեմս պարսից և բյուզանդացի նվաճողների տեսնում էր թուրք բռնակալներին, լցվում անսահման ատելությամբ նրանց նկատմամբ։ Գարեգին վարդապետը քարոզում էր ժողովրդին. «Հրաշալի է արդարև մեռնելով հաղթել, իյնալով քաջալերել, մահու անմահանալ, զոհվելով փրկվել»։ Ժամանակաշրջանն առաջադրում էր իր հրամայական պահանջները։ Որպես ազգ կազմավորված և ազգային զարթոնք ապրող ժողովուրդների մտավորականները պեղում էին իրենց ազգերի հոգևոր գանձարանը, աշխարհին ապացուցելով իրենց ինքնությունը։ «Ազգային ինքնորոշման նշանաբանի տակ հայ ժողովուրդը ի տես աշխարհի էր հանում իր բազմադարյան հոգևոր ու մտավոր հարստությունները, իր ներկան ու անցյալը, իր ինքնությունը»[17]։ Գավառը, հայ գյուղացին իր տարապանքներով, հույզերով ու մտորումներով դառնում են գրականության նյութ։ Սրվանձտյանցով հիմք է դրվում գավառահայ գրականությանը։ Մեկ տասնամյակում (1874—1884 թթ.) իրար ետևից լույս են տեսնում նրա ժողովածուները՝ «Գրոց-բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ», «Հնոց-նորոց», «Մանանա», «Համով-հոտով»։

Հնարավորություն ունենալով ապրելու Պոլսի հանգստավետ կյանքով, «Մարմարայի և Բոսֆորի գեղազվարճ ափերին», նա առանց վարանելու երկու անգամ ոտքով շրջեց Արևմտյան Հայաստանի 6 հայաբնակ նահանգները։ Այդ ճանապարհորդությունները, որ կատարվեցին ռուս-թուրքական պատերազմի ավարտից անմիջապես հետո, երբ օդը հագեցած էր անցած և գալիք մրրիկների շնչով, կարող էր եղերական վախճան ունենալ հայրենասեր գործչի համար։ Այդ ճանապարհորդությունների միջոցով իրագործվեց մեր պատմական հայրենիքի ստույգ վիճակագրությունը, ուսումնասիրվեցին ժողովրդի ոչ միայն ներկան, այլև անցիր հարստությունները, ձեռագիր ժառանգությունը։ Թղթի վրա դրոշմվեցին Արևմտյան Հայաստանի ժողովրդի նիստն ու կացը, զբաղմունքը, գյուղատնտեսության և արդյունագործության վիճակը, առևտուրը, քաղաքները, գյուղերը, շեներն ու ավերակները։ Հիմք դրվեց հայ ազգագրությանը։

«Գրոց-բրոցի» առաջաբանում Սրվանձտյանցը բացահայտում է հասարակական այն դրդապատճառները, որոնք թելադրել են հեղինակին այդ գործի կատարումը։ Նկարագրելով հայ ժողովրդի անցած ծանր ուղին, հայրենանվեր գործիչը միաժամանակ ցույց է տալիս մեր ժողովրդի կենսունակությունը։ Ըստ Սրվանձտյանցի այդ կենսունակության գաղտնիքի մեծ բաժինը կապված է հայրենի լեռնաշխարհի, հարազատ հողի, հայրենական տան հետ։ Ժողովածուի II մասում զետեղված է մեր ժողովրդի ազգային մեծ վեպի առա-

17 Ա. Ղանալանյան, Հայ բանահյուսության մեծ երախտավորը, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 1, էջ 18։

ջին պատումը՝ «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» խորագրով։ Նրա լույս ընծայումը բացառիկ մեծ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի հոգևոր մշակույթի ասպարեզում։

Ոգևորված «Գրոց-բրոցի» ունեցած ջերմ ընդունելությունից և վայելելով իր ժամանակի հայկական լուսավորական կենտրոնների բարոյական և նյութական աջակցությունը, նույն 1874 թ. Սրվանձտյանցը հրատարակում է «Հնոց-նորոց» ժողովածուն, որը հիմնականում կազմված է գրավոր աղբյուրներից։ Ըստ արժանվույն գնահատելով Հայաստանի համարյա բոլոր վանքերում ցրված ձեռագիր մատյանների նշանակությունը հայ ժողովրդի պատմության տարբեր ժամանակահատվածների լուսաբանման գործում, Սրվանձտյանցը դատապարտման խոսք է ուղղում այն վանականներին, որոնք մեր հոգևոր այդ հարստությունները երբեմն տգիտությամբ թաղում են հողում, երբեմն էլ նենգությամբ վաճառում օտար ուսումնասիրողներին։

Նյութերի առատության, բազմազանության և գիտական մեկնաբանման տեսակետից ուշագրավ է 1876 թ. հրատարակված «Մանանա» ժողովածուն։

Սրվանձտյանցի IV ժողովածուն՝ «Համով-հոտովը», լույս տեսավ 1884 թ.։ Բուռն էր նրա ընդունելությունը. Վանը, Վասպուրականի բոլոր գավառները՝ Աղբակը, Մոկսը, Հայոց ձորը, Ոստանը, Գավաշը, Պուլանըխներն ու Մանազկերտը մատուցվում են ականատեսի վկայությամբ. գեղեցիկ է Հայաստանի բնությունը, սուրբ են նրա հողն ու ջուրը, սակայն զուրկ է այդ հողի վրա ապրող ու տառապող գյուղացին։

Սրվանձտյանցի ազգագրական-բանահյուսական ստեղծագործությունների շարքում իր ուրույն տեղն է գրավում «Թորոս աղբար» երկհատորանոց գործը, որի մեջ ամփոփված են 1878—1879 թթ. Հայաստանի կարևոր նահանգները շրջագայելիս ստացած տպավորությունները։ Բազմաթիվ հարցեր է շոշափում Սրվանձտյանցը իր այդ գործի մեջ՝ արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման, արևմտահայ դպրոցի, ուսումնական նոր ծրագրերի, մանկավարժ-ուսուցիչների, հոգևորականության տգիտության։ Մեծ էր Սրվանձտյանցի հետաքրքրությունների ոլորտը, ոչ մի մանրուք չի վրիպել նրա աչքից։ «Թորոս աղբարի» I հատորը հրատարակվել է 1879 թ., II-ը՝ 1884 թ.։ Տարիների տարբերությունը իր ազդեցությունն է թողել Սրվանձտյանցի եզրակացությունների վրա։ I հատորում հայ ժողովրդի, հայ գյուղացու տառապանքները, նրա «ուրվական» վիճակը նկարագրող հայրենասեր գործիչը սրտի անհուն ցավով և դայրույթով բացականչում էր. «Եթե այսպես ապրին, լավ է, որ չապրին»։ Նրա ըմբռստ ոգին ընդվզում էր համակերպության և համբերության գաղափարի դեմ և գովերգում էր «գիտակցված մահը, որ անմահություն է»։ II հատորում նրա արտահայտություններն ստանում են ավելի զգուշավոր երանգ։ Մի կողմից սթափ գիտակցումն այն բանի, որ Բեռլինի կոնգրեսից հետո զգալիորեն վատթարացավ հայ ժողովրդի առանց այդ էլ անտանելի վիճակը, հոյակապ նկարագրություն «կոմիսերների», «թող» փչելու քաղաքականության, մյուս կողմից՝ պատրանք, թե «բարեխնամ կայսեր կառավարության նպատակն է գոհ ընել յուր երկիրն ու ժողովուրդը»։ Մի կողմից գավառահայ ժողովրդին թուրքական բանակի հասցրած չարիքների նկարագրություն, ուժգին ցանկություն՝ ստեղծել Արևմտյան Հայաստանում ապրող հայ, ասորի, քիլդունի և քուրդ ժողովուրդների միություն ընդդեմ բռնակալության, բուռն կոչ՝ հավատալ սեփական ուժերին, «օտարեն բան չհուսալ բնավ»,

մյուս կողմից՝ պատրանք, որ հարստահարությունները կատարվում են ոչ թե կառավարության հրահանգով, այլ վատթար պաշտոնյաների միջոցով։ Հայացքների այս հակասությունը արտացոլումն է այն ժամանակաշրջանի, որում ապրում էր հեղինակը։ Սակայն բոլոր դեպքերում էլ զգուշության քարոզները չէին նշանակում, թե Սրվանձտյանցը երես է դարձնում ազգային-ազատագրական շարժումներից։ Օրըստօրե ուժեղացող սուլթանական ռեակցիայի պայմաններում նրա զգուշավորության մեջ արտահայտվում էր մտահոգությունը իր ժողովրդի ճակատագրի համար։ Բայց դրանք չեն խանգարում նրան օր ու գիշեր գործել և օսմանյան կառավարության անվստահությունը վաստակել։ Կյանքի վերջին տարիներին նա դատապարտվեց Կ. Պոլսի քարոզչի պաշտոնին, ընդմիշտ հեռացվելով իր սիրելի գավառներից և գավառահայ ժողովրդից։

Սրվանձտյանցի կատարած լուսավորական աշխատանքները մեծ գնահատականի են արժանացել և՛ իր ժամանակի, և՛ հետագա սերունդների աչքի ընկնող մտավորականության կողմից։ Պատահական չէ, որ Թումանյանը Աբովյանի և Սրվանձտյանցի անունները դնում է կողք-կողքի[18]։

Համառոտ ակնարկ գցելով Սրվանձտյանցի լուսավորական գործունեության վրա, դալիս ենք այն եզրակացության, որ հայրենասեր գործչի ողջ կյանքը եղավ ժողովրդին ծառայելու մի վսեմ օրինակ։ Սրվանձտյանցը աշխատեց լուսավորություն տարածել ժողովրդի ամենաստվար դասի՝ դյուղացիության մեջ։ Ժողովրդին լուսավորելու ուժգին տենչով, ժամանակի հրամայական պահանջով նա դարձավ ուսուցիչ, խմբագիր, բանահավաք, բանագետ, Արևմտյան Հայաստանի բազմաթիվ հայաշատ կենտրոնների առաջնորդ, նվիրակ, քարոզիչ, այցելու։ Նա եղավ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի գործի մեծատաղանդ շարունակողը Արևմտյան Հայաստանում, անհամեմատ դժնի ու սարսափելի պայմաններում, երբ վտանգված էր ժողովրդի ֆիզիկական գոյությունն անգամ։ Պետականությունից զուրկ մեր ժողովրդի համար լուսավորությունը հզոր հոգևոր դենք էր հայապահպանության համար մղվող պայքարում, մի աստիճան դեպի ազգային-ազատագրական շարժումները։

---

18 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951, էջ 377—378։